ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 հունվարի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

8
(2858)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ՆՈՐ ՍԱԴՐԱՆՔ ԵՆ ԾՐԱԳՐԵԼ

Նիկոլ Փաշինյանի իշխանության աջակիցները նոր շարժում են ձեւավորվել՝ «Վարդանանք» անվամբ, ու պատրաստվում են ակցիա իրականացնել՝ ընդդեմ Վեհափառի՝ պահանջելով նրա հրաժարականը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հերթական ակցիան՝ ընդդեմ Վեհափառի, պատրաստվում են իրականացնել փետրվարի 24-ին Էջմիածնի կենտրոնական հրապարակում: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, ընդդեմ Վեհափառի այս շարժման նախաձեռնողը Անդրանիկ Դովլաթյանն է: Վերջինս, մեր տեղեկություններով, երկար տարիներ ԱՄՆ-ում է բնակվել եւ վերջերս է տեղափոխվել Հայաստան: Ուսումնասիրելով նրա ֆեյսբուքյան էջը՝ ակնհայտ է դառնում, որ վերջինս իշխանության ակտիվ աջակից է, Նիկոլ Փաշինյանին ու ՔՊ-ականներին գովերգող գրառումներ է ձոնում, ֆեյսբուքյան ուղիղ եթեր է մտնում ու կոչ անում քաղաքացիներին պաստառներով միանալ ընդդեմ Վեհափառի ակցիային: Հակաեկեղեցական նմանատիպ մի տխրահռչակ շարժում ձեւավորվել էր 2018թ.-ին՝ հեղափոխությունից անմիջապես հետո, «Նոր Հայաստան, Նոր հայրապետ» անվամբ, որի նախաձեռնողները կրկին այս իշխանության աջակիցներն էին: Այս ամենը թերեւս կասկած չի թողնում, որ հակաեկեղեցական շարժումը հստակ ուղղորդվում է իշխանության վերին էշելոնների կողմից: Սա եւս մեկ անգամ գալիս է փաստելու, որ Նիկոլ Փաշինյանի օրոք հակաեկեղեցական ալիքը աննախադեպ ծավալի է հասել: Թավշյահեղափոխականները չեն խորշում ամեն առիթով ԱԺ ամբիոնից Եկեղեցուն ու Վեհափառին թիրախավորող հայտարարություններ անել: Հակաեկեղեցական այս էպոպեայի գագաթնակետն էլ թերեւս նախորդ տարի Նիկոլ Փաշինյանի արած հայտարարությունն էր. «եթե Եկեղեցու հարաբերությունները լավ չեն կառավարության հետ, ուրեմն լավ չեն Աստծո հետ»: «Ժողովուրդ» օրաթերթը այս անչությամբ դիմեց նաեւ Մայր աթոռ, որտեղից մեզ ասացին՝ ընդդեմ Վեհափառի ակցիայի մասին տեղեկացել են նախաձեռնողների ֆեյսբուքյան էջից: «Միայն կարող եմ ասել, որ այս ամենն անհասկանալի է մեզ համար»,- ասաց Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Եսայի քահանա Արթենյանը:

Վերջերս կռվախնձոր դարձած Օղակաձեւ այգու 4-րդ հատվածում գտնվող շինությունների քանդման նախագիծն իր հետ բազում հարցեր է անպատասխան թողել, մասնավորապես՝ թենիսի կորտերի հետ կապված: Մի շարք հարցեր պարզելու համար «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց «Արարատ» թենիսի ակումբ: Ըստ նրանց՝ հարցեր կան անպատասխան, մասնավորապես՝ անհասկանալի է, թե համայնքին պատկանող տարածքն ինչպես է հանրային գերակա շահ համարվելու: «Հատկապես վերջին 2 օրվա ընթացքում մեզ ուղղված հարցերի բնույթից, ուղղվածությունից ձեւավորվում է տպավորություն, որ փորձ է արվում հարցը տանել բոլորովին այլ հարթություն, շեղել հանրության ուշադրությունը: Չենք կարող նշել, թե ինչ է այս ամենի ետեւում թաքցված, սակայն կարող ենք նշել, որ խաղն ազնիվ չի, եւ հանրային գերակա շահ առկա չի, եւ դրա ուղղությամբ մենք համապատասխան քայլեր ենք ձեռնարկելու»: Կասկածներ կան, որ համայնքը, թենիսի կորտերը հանրային գերակա շահ ճանաչելով, այն օգտագործելու է այլ նպատակներով, օրինակ՝ մեծ ռեստորանային համալիր է տեղում կառուցվելու: Ըստ ակումբի՝ խելամիտ տարբերակ, որով ներդրված միլիոնները հետ կվերադառնան, չկա: «Գեյմ-Սերվիս» ՓԲԸ կողմից վճարված՝ համայնքային սեփականություն հանդիսացող միայն հողի վարձավճարի չափը գերազանցում է տարեկան 8 մլն ՀՀ դրամը: Ըստ ակումբի՝ համայնքապետարանը ՋԼՄ-ներին տրամադրել է կասկածելի, ոչ ստույգ բովանդակությամբ տեղեկանքներ, որը հրապարակել է Factor TV-ին: Ըստ ակումբի տարածած հայտարարության՝ սխալ է նշված նույնիսկ իրենց ընկերության կազմակերպաիրավական տեսակը:

«Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ բնակարանաշինությունը գտնվում է կոլապսի եզրին: Ըստ անշարժ գույքի ոլորտի մասնագետների՝ կանխատեսվում է՝ հաջորդ տարի՝ 2024 թվականից, անշարժ գույքի ոլորտում կոլապս է սկսվելու, քանի որ բնակարանաշինության պահանջարկը եւ սպառումը քչանալու են: Ըստ Կենտրոնական բանկի հրապարակած տվյալների՝ բնակարանաշինության համար վերցված հիփոթեքային վարկերի շեմը հատել է 1 տրիլիոն դրամի սահմանը: 2023 թվականի հունվար-հունիս ամիսներին բնակելի շենքերի գործարկումը, իրականացված շինարարությունը՝ ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի եւ Երեւանի, կազմել է 92 մլդ 803 մլն դրամ: Նման թվային պատկերի հիմնական պատճառը, ըստ Կենտրոնական բանկի, եկամտահարկի վերադարձի օրենքի առկայությունն է: Տնտեսագետները, որոնք ուսումնասիրել են ՀՀ բնակարանաշինության ոլորտը, կանխատեսում են, որ օրենքի սահմանափակումից հետո, երբ այն գործի մարզերում, թվային այս սանդղակը կարող է նվազել:

Պաշտոնական աղբյուրներից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Ծիրան» սուպերմարկետը այս տարվա սկզբից Պետական եկամուտների կոմիտեի հետ մտել է դատական քաշքշուկի մեջ: Դատելով իրավիճակից՝ «Ծիրան» սուպերմարկետի ղեկավարները անբարեխիղճ աշխատանք են իրականացրել, ինչը ՊԵԿ-ի կողմից արձանագրվել է, եւ ակտ է կազմվել: Իհարկե, պետական մարմնի այս որոշման հետ համամիտ չէ սուպերմարկետի ղեկավարությունը եւ ՊԵԿ-ի որոշումը վիճարկում է դատարանում: Ի դեպ, սա առաջին դեպքը չէ, որ ՊԵԿ-ը տուգանում է «Ծիրան» սուպերմարկետին անբարեխիղճ աշխատանքի համար, սակայն սուպերմարկետը ՊԵԿ-ի գրեթե բոլոր ակտերը վիճարկում է դատարանում: Մենք կհետեւենք զարգացումներին:

ԶՐՈՒՅՑ

«ՉԿԱ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ»

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է արդարադատության նախկին նախարար Գեւորգ Դանիելյանի հետ:

-Նիկոլ Փաշինյանն օրեր առաջ հայտարարել է, որ Հայաստանը նոր Սահմանադրության կարիք ունի, եւ անհրաժեշտ է ոչ թե բարեփոխել մայր օրենքը, այլ բոլորովին նորն ընդունել: Ինչու՞ Նիկոլ Փաշինյանը հանկարծ նման որոշում կայացրեց, արդյոք Դուք նման անհրաժեշտություն տեսնո՞ւմ եք:

-Ինքս իմ նախաձեռնությամբ այդ հարցադրմանը չեմ անդրադառնում, քանի որ այն, իմ խորին համոզմամբ, չունի օրակարգային արդիական կշիռ: Դա աղերս չունի երկրի առջեւ ի հայտ եկած մարտահրավերների հետ. վերջիններս անարգել կարող են լուծվել հենց գործող սահմանադրական կարգավորումներով: Վերջին հաշվով, առաջնահերթը սահմանադրականությունն է, միայն այդ դեպքում հիմք կունենանք դատողություններ անել Սահմանադրության որակի կտրվածքով:

Հաճախ փորձ է արվում նոր Սահմանադրության ընդունումը փոխկապակցել վերջին շրջանում տեղի ունեցած՝ սահմանադրական բարեփոխումների ներկայացուցիչներից մեկի խոսքերով՝ «դարակազմիկ փոփոխությունների» հետ՝ սկսած 2018 թ. հեղափոխությունից, վերջացրած 2020 թ. համաճարակով, 44-օրյա պատերազմով, շարունակական սահմանային բախումներով, Հայաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ ոտնձգություններով, հեղաշրջման փորձերով եւ արցախահայության բռնի տեղահանմամբ: Այլ կերպ ասած՝ դարձյալ վերադառնում ենք զիջումների ճանապարհով իբր խաղաղություն երաշխավորելու հայեցակետին: Բայց այս պնդումների հեղինակները գուցե չեն նկատում, որ իրենք իրենց սկսում են բացահայտ հակասել՝ մոռանալով կամ առնվազն անտեսելով հետեւյալ փաստարկները՝

ա) այդ իրադարձությունները հիմնականում տեղի են ունեցել իշխանության կողմից սահմանադրական բարեփոխումները նախաձեռնելուց տարիներ անց միայն, ուստի չէին կարող նախապես նախատեսվել եւ հաշվի առնվել,

բ) եթե պնդում եք, որ արցախահայության նկատմամբ կիրառվել է բռնի տեղահանում, կամ խախտվել է տարածքային ամբողջականությունը, ապա դա բնավ չի նշանակում, որ հարկ է այդ ամենն ընկալել իբրեւ իրավաչափ իրադարձություններ եւ այլեւս ձեռնպահ մնալ դրանց համարժեք արձագանքելու անհրաժեշտ քայլերից,

գ) Ադրբեջանի եւ Թուրքիայի պահանջները վաղուց գերազանցել են տասնյակ տարիներ շրջանառության մեջ դրվող նախապայմանները, ավելին՝ իրենք դադարել են դրանց շրջանակը հստակ ուրվագծել, ուստի խնդիրը ոչ թե սահմանադրական կարգավորումներն են, այլ իրենց համար դե ֆակտո ծագած աննախադեպ նպաստավոր հնարավորությունները, ինչից իրենք փորձում են օգտվել առավելագույնս եւ այլն:

Մտահոգողն այն է, որ մեզանում շրջանառության մեջ է դրվում ակնհայտ հակահրավական, պարզ տրամաբանության հետ ոչ համատեղելի մեկնակետ, ըստ որի՝ քանի որ դե ֆակտո ագրեսիայի արդյունքում կորցրել ենք տարածքներ, արցախահայությունը բռնի տեղահանվել է, ուստի հարկ է համակերպվել դրա հետ եւ հրաժարվել պետության ինքնիշխանության իրական տարրերից:

-Արդարադատության նախարարությունը պնդում է, որ գործող Սահմանադրության նկատմամբ չկա հանրային վստահություն: Ի՞նչ եք կարծում, Նիկոլ Փաշինյանի ցանկությամբ փոփոխված նոր Սահմանադրության նկատմամբ հանրային վստահություն կլինի՞:

-Համամիտ եմ արդարադատության նախարարի հետ՝ այո՛, չկա անհրաժեշտ հանրային վստահություն: Այս տեսանկյունից մի կարեւոր դիտարկում անեմ. ինքս, լինելով գործող Սահմանադրության փոփոխությունների նախագծի հեղինակներից, մշտապես ուսումնասիրում եմ, թե ինչ պատճառաբանություններ են բերվում վստահության պակասի կտրվածքով: Հնարավոր չէ չհանգել այն համոզմանը, որ իրական պատճառը ոչ թե Սահմանադրության կոնկրետ դրույթներն են, այլ դրանց առնչությամբ համարժեք պատկերացումների պակասը, ինչը հիմնականում թելադրված է տարիներ շարունակ քարոզչամեքենայի կատարած նպատակասլաց աշխատանքով եւ իրավակիրառ պրակտիկայում Սահմանադրության առանցքային դրույթների անտեսմամբ: Մարդիկ, որպես կանոն, դատողություններ են անում՝ սոսկ դե ֆակտո վիճակը գնահատելով, որի անմիջական աղբյուրը, ցավոք, համարում են Սահմանադրությունը:

Համամիտ եմ, որ շատերի ընկալմամբ գործող հիմնական օրենքն ընկալվում է իբրեւ, այսպես կոչված, սուպերվարչապետության երաշխիք: Սակայն, իրականում այն այդպիսին է ընկալվում, իմ կարծիքով, Սահմանադրության հետ աղերսներ ունեցող օրենքներ ընդունելու եւ անհամաչափ իրավակիրառ պրակտիկայի արդյունքում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԱՂԻ ՄԵՋ Է

Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից իրականացվող մշակութային սպանդը կանխելու առաջնային միջոցներից են տեղում միջազգային խաղաղապահների ներկայությունն ու հստակ մեխանիզմների առկայությունը:

Համապարփակ քննարկումից հետո նման եզրահանգման են եկել Եվրոպական խորհրդարանում կայացած համագումարի մասնակիցները, որը կրում էր «Պահպանել Լեռնային Ղարաբաղի մշակութային եւ կրոնական ժառանգությունը» խորագիրը:

Համագումարին մասնակցած ԵԽ պատգամավորները վստահեցրել են, որ անելու են ամեն ինչ, որպեսզի հարցը ԵՄ գործադիր մարմնում եւս ուշադրության կենտրոնում լինի:

Եվրոպական խորհրդարանի սլովակ պատգամավոր Միրիամ Լեքսմանը իր ելույթում նշել է, որ Եվրոպական Միության պարտքն է ամեն ինչ անել Լեռնային Ղարաբաղի հայկական մշակութային եւ կրոնական ժառանգությունը փրկելու համար:

«Եվրոպական խորհրդարանը բազմիցս է բարձրաձայնել ադրբեջանական կեղծ թեզերի եւ միտումնավոր կերպով հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացնելու մասին: Չնայած սրան՝ Եվրամիությունը կարճաժամկետ տնտեսական խաղի մեջ է եւ պայմանագիր ունի Ադրբեջանի հետ: Սա անընդունելի է, եւ մեր պարտքն է ամեն ինչ անել հայկական ժառանգությունը փրկելու համար», - ասել է Լեքսմանը:

Բելգիայում Հայաստանի դեսպան, ԵՄում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Տիգրան Բալայանն իր ելույթում նշել է, որ Ադրբեջանը ոչ միայն միտումնավոր ավերում եւ սրբապղծում է այն ամենը, ինչը հայկական է, այլեւ խախտում է իրավական բոլոր պատասխանատվությունները: «Այս ամենի գլխավոր պատճառը դերակատարների անհետեւողական եւ անհամապատասխան կեցվածքն է, իրավական որոշումների ընտրովի կատարումը: Պետք է ստեղծել մոնիթորինգի մեխանիզմ, եւ Եվրախորհրդարանն ունի բավական միջոցներ, որպեսզի ստեղծի այդպիսի խումբ: Մեր պարտավորությունն է պահպանել այն, ինչ դեռ մնացել է Լեռնային Ղարաբաղում», - ասել է դեսպան Բալայանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԸ ՉԻ ՍՏԱՑԵԼ



Պաշտոնական Երեւանը խաղաղության պայմանագրի վերաբերյալ վերջին՝ Հայաստանի կողմից հունվարի 4-ին ուղարկված առաջարկների շուրջ ադրբեջանական կողմի պատասխանը դեռ չի ստացել: Այս մասին հայտնեց Արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Անի Բաղալյանը:

Առանց դեմ առ դեմ բանակցությունների Երեւանն ու Բաքուն շարունակում են փաստաթղթի փոխանակումը: Դեկտեմբերին 25-ին Երեւանը ստացել էր ադրբեջանական առաջարկները, տասն օր էլ չանցած՝ Բաքվին էին փոխանցվել հայկական կողմի դիտարկումները:

Ադրբեջանի վերջին առաջարկները ստանալուց հետո պաշտոնական Երեւանը հայտարարել էր, որ դրանում որոշակի հետընթաց կա:

ՓՈՐՁՈՒՄ Է «ԳԱՅԹԱԿՂԵԼ»

«Արեւմուտքը որոշել է, որ Ռուսաստանի Դաշնության դերը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ կարգավորման հարցում սխալ է, եւ փորձում է նրանց «գայթակղել» դեպի Բրյուսել»,- Նյու Յորքում հայտարարել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը:

Նա նաեւ նշել է, որ Ղարաբաղում ռուս խաղաղապահների տեղակայման հարցը հայկական կողմին չի վերաբերում: «Սա Մոսկվայի եւ Բաքվի խնդիրն է»,- ասել է Լավրովը:

«Մոսկվան եւ Բաքուն համակարծիք են, որ այս փուլում Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահների ներկայությունը դրական դեր է խաղում: Այնտեղ մենք իսկապես դեռ խաղաղապահներ ունենք, նույնիսկ՝ այն բանից հետո, երբ բոլորը ճանաչեցին Ղարաբաղը որպես ադրբեջանական տարածք, բայց այդ հարցն այլեւս չի վերաբերում հայկական կողմին. սա Ռուսաստանի եւ Ադրբեջանի երկկողմ հարաբերությունների հարց է:

Նախագահները քննարկել են այդ թեման, պայմանավորվել են, որ խաղաղապահների ներկայությունը դրական դեր է խաղում կայունության ամրապնդման, տարածաշրջանում վստահության ամրապնդման եւ Ղարաբաղի այն բնակիչների վերադարձի համար, ովքեր ցանկանում են դա անել»,- ասել է Լավրովը:

ՀԱՅ–ՀՈՒՆԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հունաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանը հունվարի 25-ին հանդիպել է Հունաստանի արտաքին գործերի նախարարի տնտեսական դիվանագիտության հարցերով տեղակալ Կոստաս Ֆրանգոյանիսին:

Հունաստանում Հայաստանի դեսպանության «Ֆեյսբուք»-ի էջը տեղեկացնում է, որ ՀՀ դեսպանը ներկայացրել է տարածաշրջանային վերջին զարգացումները, Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացի ներկա վիճակը, անդրադարձ է եղել փոխադարձության եւ հավասար իրավազորության սկզբունքով տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակման հարցին:

Ըստ աղբյուրի՝ զրուցակիցներն անդրադարձել են Հայաստանի Հանրապետության եւ Հունաստանի Հանրապետության միջեւ տնտեսական, արդյունաբերական եւ գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստն առաջիկայում Երեւանում հյուրընկալելու հարցին: Երկուստեք ընդգծվել է հայ-հունական տնտեսական հարաբերություններին նոր խթան հաղորդելու նշանակությունը՝ որպես ավանդական բարեկամական երկկողմ հարաբերությունների կարեւոր հիմք: Կարեւորվել է գործարար շրջանակների միջեւ կապերի ինտենսիվացումը, ինչի ուղղությամբ առաջիկայում նոր քայլեր են նախատեսվում:

«ԱՎԵԼԻ ՆԻԿՈԼԱԿԱՆ Է, ՔԱՆ ՆԻԿՈԼԸ»

«Ակնհայտ է, որ դատական համակարգը լուրջ ճնշման ներքո է. խոսքը միայն արտաքին ճնշմանը չի վերաբերում»,- հունվարի 25-ին՝ Մուրադ Փափազյանի եւ Մասիս Աբրահամյանի գործով ասուլիսի ժամանակ, ասաց փաստաբան Ռուբեն Մելիքյանը՝ անդրադառնալով դատական համակարգի, հատկապես՝ ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիներին վերաբերող քրեական գործերի վրա իշխանության ազդեցությանը եւ այդ գործում Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի դերին:

Ռուբեն Մելիքյանի խոսքով՝ ԲԴԽ նախագահն անընդհատ շեշտում է, որ ոչ ոք իրեն չի ճնշում, սակայն կարիք չկա, որ որեւէ մեկը նրան ճնշի՝ հաշվի առնելով, որ նա ՔՊ կուսակցության նախկին անդամ է. «Ես անգամ չեմ բացառում, որ որեւէ մեկը կարող է Կարեն Անդրեասյանին որեւէ հանձնարարություն չտալ, որովհետեւ ինքը շատ հարցերում շատ ավելի կաթոլիկ է, քան Հռոմի Պապը, ավելի նիկոլական է, քան Նիկոլը»:

Փաստաբանը հայտարարեց, որ ԲԴԽ-ն՝ Կարեն Անդրեասյանի գլխավորությամբ, քաղաքականացված մարմին է, որը չի կարող անկողմնակալություն դրսեւորել քաղաքական գործերում. «Դատական դեպարտամենտը, չունենալով դրա լիազորությունը, Արմեն Աշոտյանի գործով հայտարարություն է տարածում, իսկ դատավորը չի պարզաբանում՝ ինքն է տվել տեղեկությունը, թե ոչ: Կարեն Անդրեասյանն էլ ասում է՝ եթե դժգոհ են, թող էթիկայի հանձնաժողով կամ Արդարադատության նախարարությանը դիմեն, որպեսզի կարգապահական պատասխանատվության ենթարկեն դատավորին»:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԷՅՖՈՐԻԱ

«ԻՍԿ Ո՞Վ Է ԲԵՐԵԼ ՆԻԿՈԼԻՆ»

«ՔՊ-ից շատերը խուսափում են հանրային խոսքից. չեմ զարմանա, որ սկսեն հարցնել. «Իսկ ո՞վ է բերել Նիկոլին»»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է ՀՀԿ ԳՄ անդամ Արտակ Զաքարյանը:

«Ոմանց շտապ հարկավոր են «մեղավորներ»:

Մեր երկրի հանրային դաշտում «ջուր պղտորողների» պակաս երբեք չի զգացվել, իսկ հիմա՝ առավել եւս: Միշտ էլ գտնվել են թեմաներ, որոնց արհեստական եւ սխալ հնչեղություն են տրվել, եւ շնորհիվ պղտորողների «մասնագիտական հմտությունների»՝ տեղեկատվական տիրույթներն ու կենցաղային զրույցները ծանրաբեռնվել են դատարկամիտ խոսակցություններով:

2018թ. իրադարձությունները շատ ծանր նստեցին հայ ժողովրդի վրա ու դեռ շարունակելու են իրենց դառը ազդեցությունը թողնել Հայաստանի Հանրապետության հետագա ընթացքի վրա: Կյանքը ցույց տվեց, որ ոչ միայն պետական, քաղաքական, հանրային, մշակութային, գիտական, ռազմական գործիչներն են սխալվում, այլ նաեւ ժողովրդի մեծամասնությունը: 2018թ. ապրիլ-մայիս ամիսները եւ, հատկապես, 2018թ. դեկտեմբերի 9-ի եւ 2021թ. հունիսի 20-ի ընտրությունները վառ ապացույցն են այն բանի, որ ժողովուրդը եւս կարող է սխալվել:

Նիկոլի եւ իր իշխանության հարցում սխալվողների շրջանակը շատ լայն է եւ բազմաբնույթ: Ոմանք սխալվել են ՀՀ ընտրված վարչապետ Սերժ Սարգսյանին եւ ՀՀԿ-ին մերժելու հարցում: Ոմանք սխալվել են Նիկոլի հետեւից գնալու եւ փողոցներում զանգվածային ակցիաներ անելու հարցում: Ոմանք սխալվել են նրան միանալու, ողջունելու եւ աջակցելու հարցերում: Ոմանք սխալվել են, Նիկոլի ստերին ու կեղծիքներին հավատալով, նրա կուսակցությանը ձայն տալու հարցում: Ոմանք սխալվել են օրինական իշխանությունն ամեն գնով չպահելու հարցում: Ոմանք սխալվել եւ սխալվում են Նիկոլի կողքին կամ նրա իշխանությանը հենարան լինելու ու ազգակործան քաղաքականությանը ծառայելու հարցում, եւ այլն:

2018թ. գարնանային էյֆորիան եւ «ոգեւորվածությունն» այնքան մեծ էր ու անտրամաբանական, որ շատ-շատերն այդպես էլ չգիտակցեցին, որ ամեն մեկը, մի լուցկու հատիկ վերցրած, իրենց իսկ ձեռքով պատրաստվում են հրդեհել ու կործանման տանել հայ ժողովրդի բոլոր հավաքական ձեռքբերումները:

Իմ խորին համոզմամբ՝ հիմա շատ շատերն են գիտակցել եւ գիտակցում իրենց գործած ուղղակի եւ անուղղակի սխալները, բայց առայժմ բոլորը չեն պատրաստ ընդունել այն եւ միավորվել դրանք ուղղելու համար: Ինչպես որ նախկին իշխանությունների դեմ միավորված կերպով՝ կամա, թե ակամա գործվել են սխալները, այնպես էլ Նիկոլի իշխանությունների դեմ միավորված կերպով է հնարավոր ուղղել դրանք: Այս պարզ ճշմարտությունը հասկանում եւ այդ մասին խոսում են նաեւ մեր թշնամիները՝ անունը դնելով ռեւանշ:

Վերջին տարիներին գործած բազմապիսի սխալներից հետո որոշ շրջանակներ, ջուր պղտորողի ջանասիրությամբ, փորձում են իրենց մեղքերը լվանալ այս ողբերգության դեմ հենց սկզբից պայքարող, Նիկոլի տխուր հետեւանքների մասին հազար լեզվով զգուշացնող եւ ամենատուժող ուժի հաշվին: Նրանք պարզապես մոռանում են, թե Սերժ Սարգսյանի իշխանությունը խլելուց եւ այն Նիկոլին փոխանցելուց հետո որքան հպարտ եւ ուրախ էին իրենց «հաղթանակով»: Իհարկե, պատճառները վաղուց հասկանալի էին:

Հասկանալի է նաեւ, թե ինչու են հենց հիմա բարձրացնում «ո՞վ է իշխանության բերել Նիկոլին» տխմար հարցադրումը, եւ ոչ թե, օրինակ, 2018-20թթ.-ին: Դա խոսում է այն մասին, որ Նիկոլի իշխանության հեղինակությունը ձգտում է զրոյի, եւ ոչ ոք այլեւս չի ցանկանում ասոցացվել նրա եւ նրա համազգային ձախողումների հետ: Շատ հանրային ու քաղաքական գործիչներ, որ սխալվելով ողջունել ու աջակցել են Նիկոլի իշխանափոխությանը, գիտակցում են, որ փոքր երկրում պատմությունից աննկատ մնալը դժվար է: Գիտակցում են, որ 2018թ. իշխանափոխությունը, հակառակ իրենց կամքի, վերածվել է ազգային շահերի դավաճանության, Արցախի ամբողջական կորստի, 5 000-ից ավելի զոհերի, ՀՀ անվտանգությանն ու պետականությանն ուղղված սպառնալիքների: Հետեւաբար, ինչպես Նիկոլին ձախողումների համար են հաճախ շտապ պետք լինում մեղավորներ, այնպես էլ որոշ շրջանակների են շտապ հարկավոր մեղավորներ: Այնինչ, Աստծո առաջ մեղքերը քավել է հարկավոր (յուրաքանչյուրս՝ մեր մասով): Յուրաքանչյուրը թող մեղավորներ փնտրի իր մեջ ու հեռու մնա Նիկոլի կապիտուլյացիոն ջրաղացին ջուր լցնող եւ ընդդիմադիր դաշտի ջրերը պղտորող վնասակար գործունեությունից:

Հ.Գ.- Տարածվում են նույնիսկ շշուկներ, որ անգամ ՔՊ խմբակցությունից շատերը խուսափում են հանրային խոսքից ու շփումներից՝ գիտակցելով մոտեցող պատասխանատվության անբացատրելի բեռը: Չեմ զարմանա, որ նաեւ ՔՊ-ականները սկսեն հարցնել. «Իսկ ո՞վ է բերել Նիկոլին»»,- գրել է Զաքարյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵԽԽՎ

ՈՐՈՇԵԼ ԵՆ ՉՎԱՎԵՐԱՑՆԵԼ

Երեկ հայտնի դարձավ, որ ԵԽԽՎ-ն որոշել է չվավերացնել Ադրբեջանի դատվիրակության լիազորությունները եւ առնվազն 1 տարով հեռացվել է ԵԽԽՎ-ից:

Հետաքրքիր զուգադիպությամբ՝ ԵԽԽՎ նիստերից առաջ ադրբեջանական լրատվամիջոցներում հայտնվեցին Ադրբեջանի կողմից ապօրինի կալանավորված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչների լուսանկարները Բաքվի բանտից:

Վերլուծելով այս փաստերը՝ կարող ենք արձանագրել, որ որոշ ժամանակ առաջ Ադրբեջանը թույլ չէր տվել ԵԽԽՎ պատգամավորներին գնալ եւ տեսնել հայ քաղբանտարկյալներին, այս նպատակով էլ ադրբեջանական կողմը հրապարակել էր Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչների լուսանկարները, որպեսզի մեղմի ԵԽԽՎ պատգամավորների զայրույթը, ու ԵԽԽՎ այդ որոշումը չլինի:

Ստացվում է՝ Ադրբեջանի այս շինծու քայլերն ապարդյուն են եղել, եւ հրապարակված նկարները չբավարարեցին ԵԽԽՎ պատգամավորներին, ու արդյունքում նման խիստ որոշում կայացվեց:

Արձանագրենք նաեւ, որ ԵԽԽՎ-ն իր հրապարակած զեկույցում շեշտել էր, որ Ադրբեջանը թույլ չի տվել իրենց տեսակցել հայ քաղբանտարկյալներին:

ՀԵՌՔՈՒՄ

Ի՞ՆՉ Է ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. ««Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչության հանձնումների եւ դատական հանձնարարությունների բաժնի պետ Անուշ Ռշտունու դեմ քրեական գործ է հարուցվել դատարանի որոշման կատարմանը խոչընդոտելու համար՝ Քրեական օրենսգրքի 243-րդ հոդվածի հատկանիշներով:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, թե ինչպես է վերջինս Երեւան քաղաքի վարչական շրջաններից մեկում տեղի ունեցած՝ Խնամակալության եւ հոգաբարձության խորհրդի նիստից հետո պաշտոնյային ոչ վայել վարքագիծ դրսեւորել՝ վիրավորանքներ եւ սպառնալիքներ հնչեցնելով հակառակ կողմի հասցեին: Մասնավորապես, փաստաբան Տիգրան Ստեփանյանը, ահազանգելով մեր խմբագրություն, հայտնել էր, որ Անուշ Ռշտունին իր վստահորդին սպառնացել էր «առյուծների փայ դարձնել»: Գրել էինք նաեւ, որ Անուշ Ռշտունին ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Մհեր Սեդրակյանի սանիկն է. վերջինս ունի առյուծներ, եւ, հավանաբար, հենց նրա առյուծներով էլ Ա. Ռշտունին սպառնում է քաղաքացուն:

Մեզ հաջողվեց ճշտել, որ այս դեպքից հետո սույն պաշտոնյան ոչ միայն չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության, այլեւ շարունակել է դրսեւորել հակաօրինական վարքագիծ, ինչը հենց հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու պատճառ է դարձել: Փաստացի ստացվում է, որ ԱՆ որոշ պաշտոնյաներ, որոնք կոչված են հետեւելու արդարադատությանը, իրենք են խոչընդոտում դատարանի որոշումների կատարմանը՝ հավանաբար վայելելով ԱՆ բարձրաստիճան պաշտոնյաների հովանավորչությունը: Ի դեպ, ԴԱՀԿ ծառայությունը եւս ստեղծված իրավիճակի մեջ մեղքի իր բաժինն ունի. առնվազն աչք է փակում կոլեգա պաշտոնյայի հակաօրինական գործողությունների վրա:

Այս իրավիճակում հարց է առաջանում՝ ինչո՞ւ իրավապահները նույն ջանասիրությունը չեն ցուցաբերում ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի դեպքում, երբ նա Ազգային ժողովում սպառնաց ՄԻՊ թեկնածու Էդգար Ղազարյանի լեզուն ու ականջները կտրել եւ մինչ օրս անպատիժ է: Ի դեպ, նա նույն Արթուր Հովհաննիսյանն է, որը 2017թ.-ին բերման էր ենթարկվել թմրանյութերի գործով»:

Դեպքին արձագանքել է նաեւ Անուշ Ռշտունին՝ հայտնելով.

«18.01.2024թ.-ին «Ժողովուրդ» օրաթերթի էլեկտրոնային կայքում լույս է տեսել հոդված՝ «Արդարադատության նախարարության պաշտոնյայի դեմ քրեական գործ է հարուցվել» վերնագրով, որն իր մեջ պարունակում է Անուշ Ռշտունուն զրպարտող, վերջինիս պատիվը եւ արժանապատվությունը արատավորող տվյալներ, ուստի եւ պահանջում ենք հրապարակել Անուշ Ռշտունու հերքումը՝ հետեւյալ բովանդակությամբ: Նախ՝ ըստ հրապարակված նյութի. «Երեւան քաղաքի վարչական շրջաններից մեկում տեղի ունեցած՝ Խնամակալության եւ հոգաբարձության խորհրդի նիստից հետո պաշտոնյային ոչ վայել վարքագիծ դրսեւորել՝ վիրավորանքներ եւ սպառնալիքներ հնչեցնելով հակառակ կողմի հասցեին: Մասնավորապես, փաստաբան Տիգրան Ստեփանյանը, ահազանգելով մեր խմբագրություն, հայտնել էր, որ Անուշ Ռշտունին իր վստահորդին սպառնացել էր «առյուծների փայ դարձնել»:

Վերոգրյալը լկտի սուտ է եւ իրականությանը չի համապատասխանում: Խորհուրդ կտայինք անձին զրպարտող տեղեկատվություն հրապարակելուց առաջ նախ հանրամատչելի աղբյուրներով ստուգել կողմի հայտնած տեղեկատվության իսկությունը: Մասնավորապես, կարելի էր պարզել, թե որ Խնամակալության եւ հոգաբարձության նիստից հետո է տեղի ունեցել միջադեպը, եւ կոնկրետ աշխատակիցներից պարզել, թե փաստաբանի կողմից ներկայացված միջադեպը իրականություն է, թե սուտ, այլապես տպավորություն է ստեղծվում, որ հրապարակումը իրականությանը չի համապատասխանում: Իրականում Խնամակալության եւ հոգաբարձության խորհրդի նիստից հետո փաստաբանին եւ առհասարակ տղամարդուն ոչ հարիր պահվածք դրսեւորեց Վահագն Արկադիայի Ջիվանյանը, որին այս պահին չենք ցանկանում անդրադառնալ: Մանրամասների վերաբերյալ տեղեկատվություն կհայտնենք իրավապահ մարմիններին: Ինչ վերաբերում է Անուշ Ռշտունու դեմ քրեական գործ հարուցված լինելուն, ապա անձամբ ենք խոսել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակցի հետ եւ պարզել, որ Անուշ Ռշտունու կողմից դատարանի որոշման կատարմանը խոչընդոտելու որեւէ դեպք չի արձանագրվել, հետեւաբար եթե անգամ Անուշ Ռշտունու դեմ փաստաբան Վահագն Ջիվանյանի ակտիվ միջամտության արդյունքում քրեական վարույթ է հարուցվել, ապա մենք հետամուտ ենք լինելու, որպեսզի վերջինս սուտ մատնություն կատարելու համար ենթարկվի քրեական պատասխանատվության...»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հայրենի իշխանությունները նախատեսում են Սահմանադրական փոփոխություններով Հայաստանում ընդլայնել Ազգային ժողովի լիազորությունները եւ բարձրացնել խորհրդարանական վերահսկողությունը:

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը դեռ հունվարի 8-ի իր ասուլիսում հայտարարել էր, որ Սահմանադրական բարեփոխումների նոր նախագիծ է ուղարկվել Կառավարություն:

Արդարադատության նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ հայեցակարգի նախագծում տեղ գտած մի շարք հայեցակարգային ուղղությունների վերաբերյալ Սահմանադրական բարեփոխումների խորհրդի կողմից քննարկումները դեռեւս շարունակական փուլում են, եւ Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը դեռեւս չի հաստատել հայեցակարգի նախագիծն ամբողջությամբ՝ պայմանավորված դրա շուրջ քննարկումների իրականացման անհրաժեշտությամբ եւ հնարավոր լրամշակման ակնկալիքով:

Նախարարությունից նաեւ որոշ մանրամասներ են ներկայացրել հայեցակարգային նախագծի բովանդակության մասին:

Այսպիսով, ըստ ԱՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթին տրամադրած տեղեկությունների՝ հայեցակարգի նախագծով անդրադարձ է կատարվում կայուն խորհրդարանական մեծամասնության, իշխանությունների տարանջատման եւ դրանց միջեւ փոխզսպումների ու հակակշիռների ամրապնդման, Ազգային ժողովի լիազորությունների ընդլայնման եւ խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացման, Սահմանադրության 2-րդ եւ 3-րդ գլուխների տարանջատումը վերացնելու եւ սոցիալական, տնտեսական ու մշակութային հիմնական իրավունքները մարդու հիմնական իրավունքների գլխում ամրագրելու, Սահմանադրությամբ պետական եւ ինքնավար մարմինների ստեղծման հնարավորության եւ դրանց կարգավիճակը վերանայելու, պետական մարմիններին եւ մասնավոր անձանց պետական իշխանության պատվիրակման հետ կապված հարցերին, ինչպես նաեւ միջազգային իրավունքին, բնապահպանական օրակարգին, դատական իշխանությանը, դատախազությանը, քննչական մարմիններին եւ, ընդհանրապես, Սահմանադրության բեռնաթափման հնարավորություններին վերաբերող հարցերին:

Նախարարությունից նաեւ հայտնել են, որ հայեցակարգի նախագծում անդրադարձ չի կատարվում կառավարման մոդելի փոփոխությանը:

Հայեցակարգի նախագիծը առաջիկա ամիսների ընթացքում դեռ ենթակա է քննարկման եւ հաստատման Սահմանադրական բարեփոխումների խորհրդի կողմից, որից հետո կսկսվի հայեցակարգի նախագծի հանրային քննարկման փուլը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՆԻՍՏԵՐԸ ՉԵՆ ԿԱՅԱՆՈՒՄ

2023 թվականի նոյեմբերի 27-ին ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի մեղադրանքի գործը ուղարկվել էր դատարան, եւ այն պետք է քննվի Գորիսի նստավայրում, սակայն անցել է շուրջ 2 ամիս, սակայն ՊԲ նախկին հրամանատարի գործով նիստերը չեն կայանում: Այսօր էլ նիստը չի կայացել առատ ձյան պատճառով, քանի որ Գորիս հասնելն է խնդիր դարձել բոլոր կողմերի համար: Նշենք, որ Ջալալ Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով Պաշտպանության բանակի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ գեներալ-լեյտենանտ, հանդիսանալով պաշտոնատար անձ՝ հանրային ծառայող, կոչման եւ պաշտոնի բերումով հանդիսանալով հրամանատար՝ ծառայողական դիրքով եւ զինվորական կոչումով, տվյալ իրավահարաբերության շրջանակում ունենալով իր լիազորություններից բխող հրամաններ եւ կարգադրություններ տալու ու դրանց կատարումն ապահովելու իրավասություն, հայտարարված ռազմական դրության ժամանակ՝ 2020թ. հոկտեմբերի 12-ին, ծառայության նկատմամբ դրսեւորել է անփույթ վերաբերմունք, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք կատարել է ոչ պատշաճ, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Անդրանիկ Բաբայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի նոյեմբերի 7-ին՝ ժամը 15-ի սահմաններում, Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի 2 հասցեում տեղակայված ՀՀ ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի վարչական շենքում՝ նույն բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ավագ տեսուչ Գայանե Ջավարյանի աշխատասենյակում, ընտանիքում բռնության կանխարգելման աշխատանքների իրականացման նպատակով տեսուչի՝ իր եւ նախկին կնոջ՝ Անահիտ Ավետիսյանի հետ զրուցելու ընթացքում, հանդիսանալով վերջինիս մերձավոր ազգականը, նրան տվել է սպանության՝ կոկորդը դանակով կտրելու եւ սպանելու սպառնալիք, որն իրականացնելու իրական վտանգ է եղել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 55 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՔՆՆՈՒՄ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ՄԵՂԱԴՐՅԱԼ ՉԿԱ

Սկսած 2020թ.-ից՝ Իջեւանի գինու, կոնյակի գործարանը Աղստեւ գետի հունն ավերել, հունում ապօրինի մեծ պատ է կառուցել: Այդ անօրինական րության հետեւանքով դենդրոպարկի ջրառը զրկվել է Աղստեւի ինքնահոս ջրից, որի հետեւանքով դենդրոպարկում չորացել են 1500 հազվագյուտ, արժեքավոր ծառեր, թփեր եւ մոտ 24 հազար տնկի: Աղստեւ գետի մաս հանդիսացող ջրային հողը, առանց ՀՀ ջրային կոմիտեի եզրակացության, վարձակալությամբ Իջեւանի գինու, կոնյակի գործարանին հանձնելու եւ գործարանի կողմից ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021թ. հոկտեմբերի 15-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով, քրեական վարույթ է նախաձեռնվել: Իջեւանի գինու, կոնյակի գործարանն առանց շինթույլտվության պատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով: Գործարանը շարունակել է ապօրինի կառուցապատումը եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով: Սակայն, Իջեւանի գինու, կոնյակի գործարանը «պարգեւատրվել է»՝ վարձակալությամբ դենդրոպարկից ստանալով 5,7 հեկտար տարածք: 2023թ. հունվարի 16-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում կայացել է Իջեւանի դենդրոպարկի տարածքի երկրորդ մասի՝ 5,7 հեկտարի վարձակալության տրամադրելու մրցույթ, որում հաղթել է Իջեւանի գինու, կոնյակի գործարանը: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը դենդրոպարկի մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին հանգստի գոտու վերածելու նպատակով: 2024թ. հունվարի 9-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝ հարցնելով, թե Աղստեւ գետի հունն ավերելու, ապօրինի մեծ պատ կառուցելու, Իջեւանի դենդրոպարկին պատճառված վնասների վերաբերյալ քրեական գործով այժմ նախաքննություն կատարվում է արդյոք, այդ գործով որեւէ մեկին մեղադրանք առաջադրվել է, դատախազությունն այդ գործով դատախազական հսկողություն իրականացնում է արդյոք: Հունվարի 24-ին գլխավոր դատախազությունից ստացված պատասխանում նշված է, որ այդ քրեական գործը գտնվում է նախաքննության փուլում, որի շրջանակներում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձինք չկան, ՀՀ դատախազությունը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն է իրականացնում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ: Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից շրջակա միջավայրին, դենդրոպարկին պատճառված՝ միլիոնավոր դոլարի վնասի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում գրեթե երկուսուկես տարում վնասի չափերը ճշտող փորձաքննություններ չեն անցկացվել, որեւէ մեկին մեղադրանք չի առաջադրվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳԵՐԻՆԵՐ

«ԿՐԿԵՍ»՝ ԲԱՔՎԻ ԲԱՆՏՈՒՄ

Վերջերս համացանցում տարածվեցին Արցախի նախկին նախագահների լուսանկարները, ովքեր գերության մեջ են եւ պահվում են Բաքվի բանտում: Լուսանկարներում, որոնք տարածել էին ադրբեջանական լրատվամիջոցները, երեւում էր, թե ինչպես են ժպտում նախագահները, գիրք կարդում: Սա կարծես ադրբեջանական քարոզչության դրսեւորում էր, որին դիմել էր Ադրբեջանը՝ ցույց տալու համար, որ նախագահները պահվում են շատ լավ պայմաններում: Սա ադրբեջանական ձեռագիր է, որը գործարկվել էր նաեւ ռուս-հրեական ծագմամբ հայտնի բլոգեր Ալեքսանդր Լապշինի բանտարկության շրջանում:

ArmLur.am-ը կապվեց Ալեքսանդր Լապշինի հետ, որը մեզ հետ զրույցում եւս փաստեց, որ դրանք այն բանտերը չեն, որտեղ պահվում են նախագահները. դա իրականությանը չի համապատասխանում: «Իհարկե, դրանք այն պայմանները չեն, որոնք կան իրականում: Նման բանտ Բաքվում մեկն է, որտեղ պահվում են միայն Ադրբեջանի օլիգարխները, որոնք փողի դիմաց կարող են ամեն ինչ ունենալ այդ բանտում, իսկ այդ պետությունը սնվում է հիմնականում հենց այդ գումարներից: Արցախի նախկին ղեկավարներին հաստատ այնտեղ չէին կարող տանել: Նրանց հավանաբար պահում են այն բանտում, որտեղ ժամանակին պահում էին ինձ: Ինձ հետ այդ բանտում էր նաեւ Ադրբեջանի նախկին ԱԱԾ պետը, որն ուներ արտոնություն. միայն նրան էին թույլ տալիս շրջել բանտի միջանցքներում»: Ըստ Լապշինի՝ այս լուսանկարների տարածմամբ Ադրբեջանը նպատակ ունի հայ հասարակության առաջ իջեցնել նախկին նախագահների վարկանիշը, եւ կա երկրորդ նպատակ. «Նրանք ցանկանում են վերացնել այն աջակցությունը, որը ունեն հայերը նախագահների հանդեպ: Ուզում են անել այնպես, որ Հայաստանում մտածեն, թե նախագահները իրենց տանն են իրենց զգում: Ես ինքս էլ կարծում եմ, որ նրանց պետք է պատասխանատվության ենթարկեն, սակայն դա պետք է արվի Հայաստանում, նրանց սկզբից պիտի բերեն Հայաստան, հետո միայն քննեն նրանց գործունեությունը: Օրինակ՝ հիմա շատ հայեր կարծում են, որ նախկին նախագահները համագործակցում են Ադրբեջանի հետ. այդպես գրում են համացանցում: Ես հուսով եմ՝ դա այդպես չէ: Ադրբեջանն իր հերթին ուզում է ցույց տալ, որ իրենք, վայրենի լինելուց զատ, ղեկավարներին պահում են մարդկային լավ պայմաններում»,- նշեց նա: Լապշինը ընդգծեց, որ հետաքրքիր է այն հանգամանքը, որ Ռուբեն Վարդանյանը այդ նկարներում չկար: «Հետաքրքիրն այն է, որ չեմ հիշում, թե որ պաշտոնյան էր, որ նստած գիրք էր կարդում (նկատի ունենալով Արկադի Ղուկասյանին): Պատկերացրե՛ք մի քանի լուսանկարիչ շատ մոտ կանգնած նկարում են նրան, իսկ նա, ոչ մի արձագանք չտալով, շարունակում է կարդալ»: Լապշինը նշեց նաեւ, որ այդ ժպիտները արված են սպառնալիքի ազդեցության տակ, ինչպես իր դեպքում էր: Նրան սպառնացել էին զրկել շրջայցից եւ փաստաբանների հետ տեսակցությունից: Բլոգերի խոսքով՝ Արցախի նախկին նախարարներին ադրբեջանական իշխանությունները չեն պատրաստվում 15-20 տարի պահել իրենց մոտ փակի տակ: Նրանք փորձելու են հասկանալ, թե ինչ կտան ՀՀ իշխանությունները նրանց դիմաց:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՄԱՏԵՂ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում կայացավ ««Եվրոպագիտություն. իրավունք, կառավարում եւ հաղորդակցություն» մագիստրոսական համատեղ ծրագրի մեկնարկը» (DEGES) նախագծի ամփոփումը: Նախագծի իրականացումը նպաստելու է կրթական ծրագրի արդիականացմանն ու միջազգայնացմանը, միջազգային ուսանողների ինտեգրման ու ներառման համակարգերի մշակմանը, մասնակից համալսարանների կարողությունների զարգացմանը եւ դրանց ընդգրկմանը եվրոպական բարձրագույն կրթական տարածք:

Նախագիծն Հայաստանում իրականացվել է առաջին անգամ «Erasmus Mundus Design Measures» գործիքի կիրառմամբ:

«DEGES-ն իրականացվում է ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ու Վիլնյուսի, Վիձեմեի կիրառական գիտությունների, Թբիլիսիի պետական եւ Լյուբլյանայի համալսարանների համագործակցությամբ: Այսինքն՝ նախապայմաններից մեկն էր, որ պարտադիր պետք է մասնակցեն 2-3 եվրոպական բուհեր: Մենք ունենք 3 եվրոպական բուհ եւ 2 տարածաշրջանային»,- ասաց DEGES ծրագրի ղեկավար Քրիստինե Գեւորգյանը:

Նա նշեց, որ ծրագիրն իրականացնելու ճանապարհը բարդ է, քանի որ այն իրագործելու համար նախ անհրաժեշտ է հաշվի առնել մասնակից երկրների պահանջները, ազգային օրենսդրությունը եւ այն բոլոր խնդիրները, որոնք կարող են առաջանալ ծրագրի մշակման ընթացքում:

«Ուսանողը հնարավորություն կունենա սկսել իր ուսումը կամ այստեղ, կամ Վիլնյուսի համալսարանից եւ շարունակել կրթությունը այլ համալսարաններում, արդյունքում կարող է ստանալ 1, 2 կամ ավել դիպլոմներ, որն էլ այս ծրագրի առավելությունն է»,- մանրամասնեց ծրագրի ղեկավարը:

Նա տեղեկացրեց, որ երկրորդ փուլը հաղթահարելուց հետո ֆինանսավորում կստանան եւ կկարողանան ընդունելություն սկսել 100 ուսանողի շրջանակներում, որից 60-ն էլ կրթաթոշակ կստանա:

Ծրագրի նպատակն է ստեղծել միջառարկայական համատեղ մագիստրոսական նոր ծրագիր, որը կհամապատասխանի նմանատիպ ծրագրերի որակի ապահովման եվրոպական ընդունված չափանիշներին եւ ապագայում կանցնի ծրագրային հավատարմագրում:

15 ամիսների ընթացքում մշակվել են կրթական ծրագրի միասնական ուսումնական պլանն ու առարկայական ծրագրերը, ինչպես նաեւ միասնական ընդունելության, գնահատման, կրեդիտների եւ աստիճանների փոխճանաչման, որակի ապահովման, ֆինանսական կառավարման եւ այլ ոլորտները կարգավորող ընթացակարգեր եւ փաստաթղթեր:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԱՐՑԱԽ

ԱՆՈՒՐԱՆԱԼԻ ՀԵՏՔ Է ԹՈՂԵԼ

Ազնավուր Վարուժանի Սաղյանին 2023թ. արցախյան վերջին պատերազմից հետո բոլորը կհիշեն՝որպես անձնուրաց, ժողովրդասեր, հավասարակշռված ու իրական առաջնորդի հատկանիշներով օժտված քաղաքապետի: Ազնավուր Սաղյանը ծնվել է 1989 թ. ապրիլի 26-ին Արցախի Հանրապետության Մարտունի քաղաքում: Սովորել է Արցախի պետական համալսարանի Ֆիզմաթ ֆակուլտետում եւ ստացել «Մաթեմատիկա եւ ինֆորմատիկա» բակալավրի մասնագիտություն: 2007-2009թթ. ծառայել է Արցախի պաշտպանության բանակում՝ ՀՕՊ ստորաբաժանումում: Ծառայության ընթացքում իրեն դրսեւորել է որպես կարգապահ եւ բանիմաց զինվոր եւ նշանակվել ջոկի հրամանատար: 2016թ. ակտիվորեն մասնակցել է ապրիլյան քառօրյա պատերազմին, որը գնահատվել է «Մարտական ծառայություն» մեդալով: Զինակից ընկերների խոսքով՝ 2020թ. պատերազմի ժամանակ անուրանալի հետք է թողել նրա անձնվեր գործունեությունը: Կազմակերպել է զորահավաքային ռեսուրսների ազդարարումը եւ հավաքագրումը, խաղաղ բնակչության տարհանման աշխատանքները, իսկ ռազմաճակատում ակտիվ մասնակցություն է ունեցել ռազմական գործողություններին Մարտունի քաղաքի պաշտպանության ժամանակ: Ազնավուրի զինակից ընկերները հիշարժան են համարում հատկապես այն, որ Ազնավուրն իր երեք ընկերների հետ կազմակերպեց եւ իրագործեց անհիրագործելի թվացող գործողությունը, երբ գրոհով ետ վերադարձրին կորսված դիրքը հնգապատիկ գերազանցող թշնամու զորքերից: Ինչպես զինակից ընկերներն են ասում, դիրքը անմիջապես սպառնում էր Մարտունի քաղաքին եւ վերահսկում տարածքի ողջ ճանապարհները: Ազնավուրը 44-օրյա պատերազմից հետո ընտրվում է Մարտունու քաղաքապետ եւ ձեռնամուխ լինում հայրենի ավիրված քաղաքի վերականգնմանը: Armlur.am-ը կապ է հաստատել նաեւ Ազնավուրի հորաքրոջ աղջկա՝ Մարիամի հետ, որը մեզ հետ զրույցում պատմել է Ազնավուրին բնորոշ դիմագծերի մասին. «Բնավորությամբ շատ հանգիստ մարդ էր Ազնավուրը՝նվիրված բոլորին՝ ընտանիքին, ընկերներին, հայրենիքին: Մեզ համար նա բոլորից առավել էր, առաջին հերթին Ազնավուրն էր, հետո՝ մնացածը, նույնիսկ մենք: Նա իր ամեն մի քայլով էր շահել մեր այդ վերաբերմունքը: Անկեղծ, նա բոլորի համար լավ մարդու օրինակ էր: Նրա հետ աշխատողները միշտ ասում էին, թե ինչպես է անում, որ բոլորը իրենից գոհ են լինում: Միշտ պետք է բոլոր քաղաքացիների պահանջները կատարեր, դրա համար նրան բոլորը սիրում էին՝ մեծից փոքր»: 2023թ. սեպտեմբերի 19-ին սկիզբ առած պատերազմն ինչքան կանխատեսելի էր, նույնքան էլ՝ անսպասելի: Ժամանակն օրհասական էր, իսկ հապաղելը՝ կործանարար: Ազնավուրը նույն կազմակերպվածությունն ու անձնվիրությունը ցուցաբերեց նաեւ այս վերջին պատերազմին՝հավաքելով ողջ մարտունեցի տղամարդկանց եւ առաջինը մեկնելով ռազմի դաշտ: Նույն օրը՝սեպտեմբերի 19-ին, սիրելի քաղաքի մատույցներում էլ զոհվում է Մարտունու հավերժ քաղաքապետ Ազնավուր Սաղյանը: Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՎ ԹԻՐԱԽԱՅԻՆ

2023 թ.-ի սեպտեմբերին՝ Արցախում ադրբեջանական ռազմական հարձակման առաջին իսկ օրվանից, «Հայաստան» համահայկական հիմնադրամն իր միջազգային ցանցի հետ ներգրավվեց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների առաջնային կարիքները հոգալու աշխատանքներին:

Հիմնադրամից հայտնում են, որ հիմք ընդունելով բռնի տեղահանված մեր հայրենակիցների տեղաբաշխումը Հայաստանի Հանրապետության մարզերում՝ ընտրվեցին առավել խիտ տեղակայման մարզեր՝ Սյունիք, Վայոց ձոր, Արարատ, Արմավիր, Արագածոտն, Կոտայք եւ Գեղարքունիք: Հիմնադրամի աջակցության ծրագրերի աշխարհագրության ընտրության ընթացքում հաշվի է առնվել նաեւ, որ մի շարք այլ հումանիտար եւ հասարակական կազմակերպություններ, ինչպես նաեւ ՀՀ կառավարությունը, մարզպետարանները եւ տեղական ինքնակառավարման մարմինները նույն ժամանակահատվածում աջակցության տարբեր ծրագրեր էին սկսել հանրապետության տարածքում:

Նկատի առնելով հումանիտար ճգնաժամի ահռելի ծավալները եւ բռնի տեղահանվածների բնակվելու աշխարհագրությունը՝ հիմնադրամը որոշեց աջակցության բաշխման գործընթացը կազմակերպել մարզային գործընկեր հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնք թե՛ հիմնադրամի եւ թե՛ ՀՀ ոլորտային պետական կառույցների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտորեն աշխատել էին դեռեւս 2020 թ. պատերազմի ընթացքում եւ հետպատերազմյան ժամանակահատվածում, երբ ՀՀ-ում էին գտնվում ավելի քան 90,000 ժամանակավոր տեղահանվածներ: Իրականացվեց մարզերում գործող եւ 2020թ. պատերազմից հետո հիմնադրամի հետ արդյունավետ համագործակցության փորձ ունեցող հասարակական կազմակերպությունների քարտեզագրում: Արդյունքում, ըստ մարզերի, ընտրվեցին հետեւյալ ՀԿ-ները՝

- «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ - Սյունիք
- «Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ - Վայոց ձոր
- «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ - Արմավիր, Արարատ, Արագածոտն
- «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ - Գեղարքունիք
- «Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀԿ - Կոտայք
- «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» ՀԿ - Արարատ, Կոտայք, Շիրակ, Լոռի, Տավուշ, Վայոց ձոր, Սյունիք, Գեղարքունիք
- «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ - Կոռնիձոր, ապա՝Սյունիք եւ Տավուշ
- «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ - Երեւան (միայնակ մայրեր)

Արդյունավետ համագործակցության արդյունքում սեպտեմբերի 21-ից առ այսօր շուրջ 200 տոննա հումանիտար աջակցություն է բաշխվել նշված մարզերում տեղակայված կարիքավոր ընտանիքներին: Աջակցությունն իր մեջ ներառել է սննդի եւ հիգիենայի պարագաների փաթեթներ, տաք հագուստ, մահճակալներ, անկողնային պարագաներ, ծածկոցներ, տաքացուցիչներ եւ այլն:

Ընդհանուր առմամբ, հումանիտար աջակցությունից օգտվել է 62,000 շահառու, որից միայն տեղահանության օրերին Կոռնիձորում ստեղծված աջակցության կետերում՝ շուրջ 20,000 մարդ:

Գործընկեր կազմակերպությունները հիմնադրամին են ներկայացրել բաշխման հաշվետվություններ՝ տրամադրված աջակցության յուրաքանչյուր փուլի համար: Հաշվետվությունը ներառել է ինչպես թվային ու նկարագրողական փաստագրում, այնպես էլ շահառուների գրանցման թերթիկներ՝ շահառուի ստորագրությամբ: Իր հերթին, հիմնադրամը մարզերում իրականացրել է բաշխման մոնիթորինգ, նկարահանումներ, պատրաստել տեսանյութեր, որոնք տեղադրվել են համացանցում:

Արցախցիներին տրամադրված հումանիտար օգնությունը մեծամասամբ ֆինանսավորվել է հիմնադրամի ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Բրազիլիայի, Մեծ Բրիտանիայի եւ Տորոնտոյի տեղական մարմինների, ինչպես նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հավաքագրած միջոցների հաշվին:

Հիմնադրամը շնորհակալություն է հայտնում իր տեղական մարմիններին հումանիտար աջակցության հրատապ ծրագրերը ֆինանսավորելու, իսկ գործընկեր հասարակական կազմակերպություններին՝ աջակցությունը ժամանակին եւ թիրախային բաշխելու համար:

Այս փուլով «Հայաստան» համահայկական հիմնադրամն ավարտում է իր՝ հրատապ արձագանքման աջակցության ծրագրերը՝ անցնելով բռնի տեղահանված մեր հայրենակիցներին աջակցելու համար միջնաժամկետ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Իր 32-ամյա գործունեության ողջ ընթացքում «Հայաստան» համահայկական հիմնադրամը 1000-ավոր հումանիտար եւ զարգացման ծրագրեր է իրականացրել Լեռնային Ղարաբաղի եւ արցախցիների համար: Այժմ, երբ մեր հայրենակիցները ստիպված լքել են իրենց բնօրրանն ու հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում, հիմնադրամը շարունակելու է տարաբնույթ ծրագրերի միջոցով աջակցել նրանց:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽ

«ՈՐՊԵՍԶԻ ՏՈՒՆՆ ԱՆԲՆԱԿ ՉԼԻՆԻ»

2023թ. Արցախի հայաթափումից հետո ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքում բնակություն է հաստատել շուրջ 3000 բռնի տեղահանված արցախցի:

Այս մասին Armlur.am-ի հետ զրույցում նշեց Վանաձորի համայնքապետարանի հանրային կապերի, լրատվության եւ արտաքին կապերի բաժնի պետ Աստղիկ Ավետիքյանը: «Առաջին օրերին բոլորին գրանցում էինք եւ նախնական տեղավորում էինք կամ ընդհանուր կացության վայրերում, կամ էլ հյուրատներում: Գրանցումից հետո արդեն առանձին բնակարաններով ապահովվեցին մեր հայրենակիցները: Իհարկե, մեծամասնությունը՝վարձակալությամբ, սակայն ունենք նաեւ երեք խոշորացված համայնք, որտեղ սեփականատերերը տները տրամադրել են անվճար, որ տունը անբնակ չլինի: Պետք է նշեմ նաեւ այն, որ եղել են նաեւ մարդիկ, որ նախընտրել են համայնքում բնակարան գնել եւ մշտապես ապրել մեր համայնքում»,- ասաց Աստղիկ Ավետիքյանը եւ միաժամանակ շեշտեց, որ նոյեմբերի 1-ի դրությամբ Վանաձորում արդեն չեն եղել ընդհանուր կացության վայրերում բնակվող բռնի տեղահանվածներ: Մեր զրուցակցի խոսքով՝Վանաձորում գործող աշխատանքային խումբն առ այսօր այցեր է կատարում բռնի տեղահանված ընտանիքներին եւ ծանոթանում նրանց առաջնային կարիքներին: Այնուհետեւ խումբը, պետության ու բարերարների աջակցությամբ, փորձում է լուծել այդ խնդիրները: «Շատերը նախընտրեցին բնակվել գյուղական համայնքներում, քանի որ գյուղերում սեփական տներին կից լինում է հողատարածք, եւ հարմար է զբաղվելու նաեւ հողագործությամբ: Ընդհանուր առմամբ, համայնքում շարժը մեծացել է, մի մասը տաքսի ծառայությամբ է զբաղվում, մի մասին մենք ենք առաջարկել համայնքին կից մանկապարտեզներում աշխատել, եւ սիրով էլ ընդունել են մեր առաջարկը, որոշները տնային պայմաններում են հրուշակեղեն պատրաստում եւ իրացնում:

Դրական փոփոխություն միանշանակ համայնքում զգացվում է, եւ ամենակարեւորը՝ պետք է շեշտեմ, որ նրանք եւս շահագրգռված են աշխատանք գտնելու, հնարավորինս շուտ ինտեգրվելու համայնքի կյանքին»,- ասաց մեր զրուցակիցը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՍԵՎԱԿ-100

ՆՊԱՏԱԿԸ՝ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՈՒՄԸ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ընդունեց Պարույր Սեւակի 100-ամյակին նվիրված մրցույթի հաղթողներին:

Բանաստեղծի 100-ամյակին նվիրված «Եղիցի լույս. Սեւակ-100» մրցույթին մասնակցել են ավելի քան 4000 դպրոցականներ, որոնցից հաղթող է ճանաչվել 7-ը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարը, շնորհավորելով աշակերտներին մրցույթում առաջինը լինելու կապակցությամբ, նշեց, որ նման մրցույթները լինելու են շարունակական:

«Հուսով եմ, որ դուք նույն ակտիվությամբ, նաեւ ձեր դասընկերներին ոգեւորելով՝ կմասնակցեք մեր մյուս մրցույթներին, որոնք ոչ միայն մեծացնում են իրազեկվածությունը մեր կարեւոր գործիչների, մեծ վաստակ ունեցող մարդկանց ու նրանց գործունեության մասին, այլ նաեւ կրթական յուրահատուկ գործընթաց են դառնում: Դրանք տեւում են մի քանի օր, եւ այդ օրերին եւս մեկ անգամ վերանայում, թերթում, հիշում եւ նոր գիտելիքներ եք ձեռք բերում»,- ասաց նախարարը:

Մասնակիցների խոսքով՝ մրցույթը եւս մեկ հնարավորություն էր մեծանուն բանաստեղծի մասին կարդալու, ուսումնասիրելու եւ մեկ այլ տեսանկյունից բացահայտելու համար:

Հարցերին առաջինը ճիշտ պատասխանած 7 մասնակցներն են ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Արփի Չոբանյանը, ՀՀ Տավուշի մարզի Գանձաքարի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Նանե Ներկարարյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխանի հիմնական 2 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Միլենա Կռոյանը, ՀՀ Արարատի մարզի Գետազատի Ն. Մանասերյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Մարուշ Մանուկյանը, Երեւանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային վարժարանի 10-րդ դասարանի աշակերտ Արման Աստվածատրյանը, ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Էմմա Չոբանյանը եւ Երեւանի հիմնական 112 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Թամարա Քարայանը:

Անդրեասյանը հաղթող աշակերտներին հանձնեց պատվոգրեր եւ Պարույր Սեւակի գիրքը:

Պարույր Սեւակի 100-ամյակի հոբելյանի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը եւ Պարույր Սեւակի տուն-թանգարանը հայտարարել էին մրցույթ դպրոցների (8-12-րդ դասարաններ) եւ նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար: Մրցույթի նպատակն էր մեծանուն գրողի, նրա ժառանգության հանրահռչակումը, պատանիներին ու երիտասարդներին այն առավել ճանաչելի դարձնելը:

Պարույր Սեւակի 100-ամյակին նվիրված մրցույթը մեծ հետաքրքրություն է առաջացրել սովորողների շրջանում. հրապարակված մրցութային 7 հարցերի մեկնաբանություններում գրվել է ավելի քան 4000 պատասխան: Հունվարի 15-21-ը՝ յուրաքանչյուր օր, ԿԳՄՍ նախարարության ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակվել են Պարույր Սեւակի կյանքին, ստեղծագործությանը վերաբերող տարաբնույթ հարցեր, եւ համաձայն մրցութային պայմանների՝ առաջինը ճիշտ պատասխանողը ճանաչվել է տվյալ օրվա հաղթող: Խմբագրված, ինչպես նաեւ այլ օգտատերերի ֆեյսբուքյան էջերից հրապարակված պատասխանները չեն դիտարկվել: Որպես պարտադիր պահանջ՝ պատասխանում պետք էր նշել սովորողի տվյալները (անուն, ազգանուն, մարզ, քաղաք/գյուղ, ուսումնական հաստատություն, դասարան/կուրս, մասնագիտություն):

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԺԵՔՆԵՐ

«ԱՅՆ, ԻՆՉ ԱՆՀՆԱՐ Է ՄԱՇՎԱԾ ՏՈՂՈՎ ԵՐԳԵԼ»

Բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ եւ մշակութային գործիչ Պարույր Սեւակը ծնվել է 1924 թվականի հունվարի 24-ին Արարատի մարզի Չանախի գյուղում, որն այժմ կոչվում է Զանգակատուն:

5 տարեկանից գրել, կարդալ իմացող Սեւակը 16 տարեկանում ընդունվում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայերենի բաժինը, ապա ուսումը շարունակում Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտում՝ հետագայում դասախոսելով այնտեղ:

Պարույր Սեւակը մահանցել է 1971 թվականի հունիսի 17-ին ավտովթարից:

Իր կարճատեւ ստեղծագործական կյանքի ընթացքում Պարույր Սեւակը հասցրել է ստեղծել հայ գրականության այնպիսի գոհարներ, ինչպիսին են «Այր մի Մաշտոց», «Նահանջ երգով», «Երգ երգոց» եւ «Անլռելի զանգակատուն» պոեմները, «Սիրո ճանապարհը» եւ «Մարդը ափի մեջ» ժողովածուները, Մաշտոցի, Կոմիտասի, Քուչակի եւ այլ մեծանուն հեղինակների ստեղծագործությունների գրաքննադատական հետազոտություններն ու հոդվածները, «Սայաթ -Նովա» մենագրությունը եւ այլն: Թարգմանել է Ադամ Միցկեւիչի պոեմները, Միխայիլ Լերմոնտովի «Դեւը» եւ բազմաթիվ այլ գործեր:

Պարույր Սեւակի ստեղծագործությունների հիման վրա են նկարահանվել «Մեսրոպ Մաշտոց» եւ «Սայաթ-Նովա» փաստագրական ֆիլմերը, ռեժիսոր Լեւոն Մկրտչյանի «Պարույր Սեւակ» կամ «Եղիցի լույս» ֆիլմը, որում ողջ ընթացքում գրողը կարդում է իր իսկ բանաստեղծությունները:

Գրողն ամուսնացել է 2 անգամ: Առաջին կինը՝ Մայա Ավագյանը, որը Ներսիսյան դպրոցի վերջին տեսուչ Սեդրակ Ավետյանի թոռնուհին էր, Սեւակի նամակներում անվանվում է «անփոխարինելի մարդ»:

«Այն, ինչ անհնար է մաշված տողով երգել»,- կնոջ մասին գրել է Պարույր Սեւակը:

Այս ամուսնությունից ծնվել է գրողի առաջնեկը՝ Հրաչիկ Ղազարյանը: Իսկ երկրորդ կինը՝ Նելլին, վրացուհի էր, ում հետ ծանոթացել էր Մոսկվայում ուսանելու տարիներին, եւ ով հետագայում պիտի դառնար իր երկու որդիների մայրն ու Սեւակի բանաստեղծությունների ռուսերեն թարգմանությունների հեղինակը, նրա կյանքի ընկերն ու պոեզիայի լավագույն մեկնաբանը:

ՄԱՅՐ ԹԱՏՐՈՆԸ՝ 102 ՏԱՐԵԿԱՆ

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը 102 տարեկան է: Այն իր դռները պաշտոնապես բացել է 1922 թվականի հունվարի 25-ին՝ Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ: Այն ժամանակ դեռեւս Առաջին պետական թատրոնի անդրանիկ ներկայացման հեղինակը Իսահակ Ալիխանյանն էր, իսկ առաջին գեղարվեստական ղեկավարը՝ Լեւոն Քալանթարյանը:

1937 թվականից Գաբրիել Սունդուկյանի անունը կրող թատրոնը առանձնանում է շեքսպիրյան ներկայացումներով՝ Երեւան բերելով ԽՍՀՄ-ի առաջին շեքսպիրյան փառատոնը եւ կոնֆերանսը:

Հայտնի է, որ թատրոնի բեմի առաջին վարագույրը, որի վրա պատկերված է եղել Մարտիրոս Սարյանի հայտնի «Հայաստան» կտավը, 10 տարի ծառայելուց հետո իջեցվել է եւ այժմ զարդարում է նախասրահի պատը:

Թատրոնը մի քանի անգամ վերաբացվել է. նախ այն գործել է Հանրապետության հրապարակում, ապա՝ 1938 թվականին տեղափոխվել նոր շենք, որը 1962 թվականին այրվել է: Նույն վայրում կառուցվել է ճարտարապետներ Ռ. Ալավերդյանի, Ռ. Բադալյանի, Ս. Բուրխաջյանի եւ Գ. Մնացականյանի համահեղինակած նոր շենքը, որը յուրահատուկ ճարտարապետական կառույց է: Թատրոնը վերաբացվել է՝ կրկին անդրանիկ ներկայացման համար նախապատվությունը տալով «Պեպո»-ին, այս անգամ՝ Վարդան Աճեմյանի բեմադրությամբ:

Տարիներ անց՝ 2015 թվականին, թատրոնը վերանորոգվում է եւ վերազինվում նոր տեխնիկայով ու վերաբացվում 2016 թվականի դեկտեմբերի 13-ին: Ավանդույթը չխախտելու համար անդրանիկ ներկայացման համար Արմեն Էլբակյանը բեմադրում է Գաբրիել Սունդուկյանի «Պեպո»-ն:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Հայաստանի բռնցքամարտի մեծահասակների 2024 թվականի առաջնության չեմպիոններն ու մրցանակակիրները հայտնի են:

«Դինամո» մարզահամալիրում կայացած առաջնության ոսկե մեդալակիրներ ըստ քաշային կարգերի դարձան՝ 48 կգ Բարեղամ Հարությունյան (2-րդ տեղ՝ Հովհաննես Հարությունյան, 3-րդ տեղեր՝ Հմայակ Հովհաննիսյան, Սեյրան Վարդանյան), 51 կգ՝ Արեն Ասլամազյան (2-րդ տեղ՝ Վահե Բադալյան, 3-րդ տեղեր՝ Հայկ Ալարբեքյան, Հարություն Կարապետյան), 54 կգ՝ Դավիթ Եգորյան (2-րդ տեղ Ժիրայր Սարգսյան, 3-րդ տեղեր՝ Սուրեն Ռուբենյան, Ռուբեն Գարբոյան), 57 կգ՝ Արթուր Բազեյան (2-րդ տեղ՝ Ռուսլան Ասլիկյան, 3-րդ տեղեր՝ Վարդան Միրզոյան, Էրիկ Թոխյան), 60 կգ՝ Արթուր Սահակյան (2-րդ տեղ՝ Արթուր Ղազարյան, 3-րդ տեղեր՝ Խաչիկ Բաղումյան, Արարատ Գյուլբանգյան), 63,5 կգ՝ Նարեկ Հովհաննիսյան (2-րդ տեղ՝ Կարեն Տոնականյան, 3-րդ տեղեր՝ Էրիկ Իսրայելյան, Վահագ Գալուստյան), 67 կգ՝ Արարատ Հարությունյան (2-րդ տեղ՝ Հարությունյան, Հակոբկոխյան, 3-րդ տեղեր՝ Սերյոժա Հարությունյան, Արթուր Մկրտչյան), 71 կգ՝ Գուրգեն Մադոյան (2-րդ տեղ՝ Ջավեն Գալստյան, 3-րդ տեղեր՝ Արման Միսկարյան, Նարեկ Զախարյան), 75 կգ՝ Վախթանգ Հարությունյան (2-րդ տեղ՝ Գարիկ Անտանոսյան, 3-րդ տեղեր՝ Վահե Կարապետյան, Դավիթ Բասենցյան), 80 կգ՝ Ռաֆայել Հարությունյան (2-րդ տեղ՝ Համբարձում Հակոբյան, 3-րդ տեղեր՝ Աղվան Ալեքսանյան, Համլետ Ադամյան), 86 կգ՝ Համլետ Հարությունյան, (2-րդ տեղ՝ Դանիել Հարությունյան, 3-րդ տեղեր՝ Միեր Շամոյան, Լիպարիտ Ղուլարյան), 92 կգ՝ Հենրիկ Ճղրիկյան (2-րդ տեղ՝ Իշխան Հովսեփյան, 3-րդ տեղեր՝ Կարո Վարդեւարյան, Անուշավան Մխիթարյան), 92 + կգ՝ Դավիթ Չալոյան (2-րդ տեղ՝ Հովհաննես Փափազյան, 3-րդ տեղեր՝ Ավետիք Հովհակիմյան, Մանուկ Խաչատրյան):

ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԹԱԵՔՎՈՆԴՈԻՍՏԸ

2024 թվականի առաջին ամիսը հաղթական է եղել սեւանցի մարզիկ Դավիթ Թորոսյանի համար, որը տարիներ շարունակ բարձր է պահել Սեւան համայնքի պատիվը մարզական տարբեր առաջնություններում:

Դավիթ Թորոսյանն օրերս Մոսկվայում կայացած «Արեւմուտք-Արեւելք» թաեքվոնդոյի միջազգային առաջնությունում հաղթել է բոլոր մրցակիցներին եւ կանգնել պատվո հարթակի 1-ին աստիճանին:

«Այժմ Դավիթ Թորոսյանը մարզիչ Գոռ Երեմյանի սանն է: Ընտրելով թաեքվոնդո մարզաձեւը՝ Դավիթն իր առաջին քայլերը կատարել է Սեւան համայնքի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցում՝ մարզիչ Խաչիկ Թորոսյանի ղեկավարությամբ՝ գրանցելով մի շարք հաղթանակներ: Խոստումնալից թաեքվոնդոիստը տարիների ընթացքում դարձել է փորձառու մարզիկ՝ ավելացնելով մեդալների քանակը»,- ներկայացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից:

● *Փետրվարի 3-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Մատնաչափիկ» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-2000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հաշմանդամ երեխային կամ 1-ին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվո՞ւմ է աշխատանքային ստաժում: Եվ կցանկանայի նաեւ տեղեկանալ՝ երեխային խնամելու ժամանակահատվածը ինչպես է հաշվառվում աշխատանքային ստաժում:

Երանուհի Հակոբյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության դեպքում հաշմանդամ երեխայի խնամակալության ժամանակաշրջանը մինչեւ երեխայի 18 տարին լրանալը կամ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է ծնողի, որդեգրողի, խնամակալի աշխատանքային ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության ժամանակահատվածը հաստատող տեղեկանք, իսկ խնամակալի դեպքում՝ նաեւ խնամակալ ճանաչված լինելու եւ խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքներ, սակայն տասը տարուց ոչ ավելի՝ մինչեւ կենսաթոշակ նշանակելն ընկած ժամանակահատվածում:

Սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաեւ ծնողներից մեկի՝ մինչեւ յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի: Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ եթե ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, արդյոք եկամտային հարկի պարտավորություն առաջանում է, թե ոչ:

Մանվել Սիրադեղյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված կրթաթոշակները, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այսինքն՝ ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

ԼՈՒՌ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ՇՄՆ հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնի տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյանն իր էջում լուսանկար է հրապարակել՝ այն վերնագրելով. «Ճամբարակի այսօրվա լուսաբացը: Երկու արեւ»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Տարածք	Ջերմաստիճան
Շիրակ	- 5 - 9 - 2 - 5
Կոտայքի լեռներ	- 6 - 8 - 2 - 4
Կոտայքի նախալեռներ	0 - 3 0 - 2
Գեղարքունիք	- 3 - 5 - 1 - 4
Լոռի	- 8 - 13 + 2 + 5
Տավուշ	- 2 - 5 + 3 + 7
Արագածոտնի լեռներ	- 0 - 3 - 3 - 5
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 3 - 2 + 1

Տարածք	Ջերմաստիճան
Արարատ	0 + 2 + 1 + 3
Արմավիր	- 1 - 3 + 1 + 3
Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 - 3 - 4
Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 + 1 + 3
Սյունիքի հովիտներ	- 2 - 4 + 6 + 8
Սյունիքի նախալեռներ	- 6 - 9 - 2 + 3
ԼՂՀ	- 4 - 8 - 2 + 3
Երեւան	0 - 2 - 2 - 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.1.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*